



**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ ՎԱՐԴԳԵՍ ԳՈՒՐՈՒՅԱՆԻՆ
«Ս. ՍԱՀԱԿ - Ս. ՄԵՍՐՈՊ» ՇՔԱՆՇԱՆՈՎ
ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՅ
ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱԶԱՏ ԶԱԽԱԿՆ
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷԶՄԻԱԾՆԻ
ՄԵԾԱՐԳՈՅ ՏԻԱՐ ՎԱՐԴԳԵՍ ԳՈՒՐՈՒԵԱՆ
ՈՐ Ի ԼՈՍ ԱՆՃԵԼՇՍ, ԱՄՆ**

Մեծարգոյ պրն Գուրուեան,

Համայն հայութեան հոգեւոր կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնութիւնն ենք յղում Ձեզ՝ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու արժանաւոր զաւակիդ:

Գոհունակութիւն է Մեզ համար անդրադառնալ Ձեր ազգային-հասարակական երկարամեայ գործունէութեանը: Տասնեակ տարիներ պատասխանատու յանձնառութիւններ ստանձնելով Բեյրութի Յովակիմեան-Մանուկեան, Քուէթի Ազգային վարժարաններում, ՀԲԸ Միութեան Մելքոնեան կրթական հաստատութիւնում, Դուք ամենայն նախանձախնդրութեամբ ներդրել էք Ձեր ջանքերը, որպէսզի կրթական հաստատութիւնները ճանաչողութեան լոյսով եւ հոգեւոր իմացութեամբ շարունակեն սնել երիտասարդ հայորդիներին՝ որպէս ապահով երաշխիք մեր ժողովրդի ինքնութեան պահպանութեան:

Ուրախ ենք, որ մանկավարժական շնորհակալ առաքելութիւնը շարունակում էք նաեւ Միացեալ Նահանգներում՝ յաջողութեամբ վարելով Հոլիվուդի Թէքէեան Մշակութային Միութեան Արշակ Տիգրանեան վարժարանի տնօրէնի պաշտօնը: Ձեր եւ բարեջան բոլոր պատասխանատուների նուիրեալ ծառայութեան շնորհիւ վարժարանը, իբրեւ հայակերտումի նուիրական օջախ, իր առատ հունձքով հարստացնում է ա-

մերիկահայ կեանքի անդաստանը՝ սնելով հայորդի Մեր զաւակներին սահակ-մեսրոպեան դպրոցից սկիզբ առնող սրբազան մեր արժէքներով:

Գովելի է, որ Դուք աշխոյժ մասնակցութիւն էք բերում նաեւ Հոլիվուդի Ս. Յովհաննու Կարապետ եկեղեցու համայնքային կեանքին՝ նաեւ եկեղեցասիրութեան Ձեր անձնական օրինակը մատուցելով Ձեր սաներին:

Առ ի գնահատութիւն տարիների Ձեր վաստակաշատ գործունէութեան, սիրով ընդառաջում ենք ԱՄՆ հայոց Արեւմտեան թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Յովնան արքեպիսկոպոս Տէրտէրեանի խնդրանքին եւ Հայրապետական այսու Կոնդակով շնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

ՍՈՒՐԲ ՍԱՀԱԿ - ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՊ

պատուոյ բարձր շքանշանը:

Առ Աստուած Մեր սրտաբուխ աղօթքով հայցում ենք, որ Բարձրեալ Տէրը Սուրբ Սահակի եւ Սուրբ Մեսրոպի բարեխօսութեամբ Իր օրհնութեան ներքոյ հաստատուն, շէն ու պայծառ պահի Թէքէեան Մշակութային Միութեան Արշակ Տիգրանեան վարժարանը եւ պարգեւի Ձեզ ամենայն բարիք ու ազգօգուտ գործերի նորանոր յաջողութիւններ:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի Մէնջ. Ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 3-ն Մարտի
յամի Տեառն 2008 եւ ի թուին Հայոց ՌՆԾԷ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 463